
**ԴԵՐԱՍԱՆԻ ԱՆՁԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ԱՐՇԱԿՅԱՆ Ս. Մ.

Թատրոնը սոցիալական երևույթ է: Այն և՛ դերասանին, և՛ հանդիսատեսին օգնում է ամբողջ ներկայացման ընթացքում հեռու մնալու իրենց առօրյա կյանքից և խնդիրներից:

Դերասանի համար թերապևտիկ միջոց է փոխակերպման գործընթացը: Փոխակերպումը մի դեպքում նշանակում է կերպափոխում, մյուս դեպքում՝ փոփոխական էներգիայի բարձրացում կամ իջեցում: Փոխակերպման ժամանակ անձի հոգեկան նախնական բովանդակությունը վերափոխվում է այլ բովանդակության: Ռուս հոգեբան Մ. Էմինովը հոգեբանական փոխակերպումը բացատրում է հետևյալ կերպ. «Փոխակերպումը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտել որպես վերածնող գործընթաց, որի ժամանակ իրականանում է անձի հոգեկան աշխատանքը՝ նախնական բովանդակության վերափոխումը փոխակերպված բովանդակության»¹:

Փոխակերպման գործընթացում կարելի է տարբերել հետևյալ ընդհանուր կառուցվածքը՝ 1. փոխակերպվող առարկան կամ օբյեկտը, այսինքն՝ այն նախնական առարկան, վիճակը, երևույթը, որ ենթարկվում է փոխակերպման: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է դերասանի կենսագրությանը, անձնային փորձին և հիշողություններին: 2. Փոխակերպված առարկա, օբյեկտ, որը փոխակերպման արդյունքն է: 3. Փոխակերպման աշխատանքը՝ փոխակերպման բուն գործընթացը: 4. Փոխակերպման ժամանակը, որը սովորաբար ներկան է, բայց մեծ նշանակություն ունեն նաև անցյալն ու ապագան: Հատկապես ներկա և անցյալ ժամանակների փոխակերպման ընթացքում կարծես գիտակցվում են անգիտակցական հոգեկան մղումները, որոնք իրագործվում են, կերպափոխվում, նորացվում: 5. Փոխակերպման ճյուղերը. որպես կենդանի, շարունակական գործընթաց՝ փոխակերպումը ներառում է 2 ենթագործընթաց՝ վերընթաց և վայրընթաց փոխակերպում:

«Մարդը միշտ ընթանում է ներքին ներդաշնակության հասնելու ճանապարհով: Պատկերացումները, զգացմունքները և գաղափարները, անհատի պատկերացումների, զգացմունքների կամ գաղափարների հետ հակասության մեջ մտնելով, խաթարում են անձի ներդաշնակությունը, ստեղծում հոգեբանական անհարմարավետ վիճակ: Ներքին ներդաշնակության հասնելու պահանջ զգալով՝ մարդը պատրաստ է ձեռնարկել տարբեր գործողություններ, որոնք կօգնեն վերականգնելու կորցրած հավասարակշռությունը», - գրում է հոգեբան Ռ. Բերնսը²:

¹ Магомед-Эминов М. Ш., Трансформация личности, М., 1998, с. 218.

² Бернс Р., Развитие Я-концепции и воспитание, М., 1986, с. 40.

Մ. Էմինովի կարծիքով. «Մարդը վերընթաց փոխակերպման ժամանակ ոչ միայն վերադառնում է իր հիմնախնդիրների սկզբնաղբյուրներին, այլև դիմում է իր ներքին ուժի և էներգիայի ակունքներին, որպեսզի, հենվելով դրանց վրա, նորից բարձրանա: Իջնելով իր անձի խորքերը՝ մարդը նորացման և վերադարձի համար այնտեղ գտնում է ամուր հիմքեր: Անձնական փորձի մեջ վառ իրադարձություններ գտնելով՝ մարդը նորովի է կառուցում իրեն փոխակերպման գործընթացում»³:

Գոյություն ունեն փոխակերպման մի քանի ձևեր՝ տրավմատրանսֆորմացիա, բազիսային, ինդուկցիոն, նորմատիվային, անհատականացնող, ինքնաիրականացնող և վերածնող:

Մ. Էմինովի համոզմամբ, «Բազիսային փոխակերպման հասկացությունը հիմնվում է նախնական բովանդակության գաղափարի և անձի կառուցվածքի բազիս-վերնաշենքային պատկերացման վրա: Փոխակերպման հոգեկան աշխատանքի գործընթացում հոգեկան բովանդակությունը ենթարկվում է փոխակերպումների, որոնց արդյունքը նորաստեղծ բովանդակությունն է՝ փոխակերպուկը (տրանսֆորմերը)»⁴:

Զ. Ֆրեյդը ավարտուն տեսակետ է հայտնել բազիսային փոխակերպման մասին: Նա կարծում է, որ անձի ձևավորման հիմքը դրվում է վաղ մանկության ընթացքում: Ֆրեյդը նկարագրել է լիբիդոյի փոխակերպման մի գործընթաց՝ սուբլիմացիան: Ըստ հոգեբան Յ. Կլիմենկոյի՝ սուբլիմացիայի հիմքում ընկած է յուրաքանչյուր (ոչ միայն Ֆրեյդի լիբիդոն) հակում կամ պահանջմունք, որի բավարարումը կասեցված կամ արգելափակված է. այն գոյություն ունի երկու ձևով՝ ձգտումներ, որոնք չեն փոխում իրենց օբյեկտը, և ավելի բարձր դրդապատճառների ազդեցության տակ նոր օբյեկտ գտնող հակումներ:

Յուրաքանչյուր ստեղծագործության հիմնական շարժիչ ուժը երևակայությունն է: Այն խորհրդանշական ձևով բավարարում է շրջափակված ցանկությունները, ընդ որում, որպես նպատակ հանդես է գալիս կերպարը: Այսինքն՝ ստեղծագործական գործընթացի հիմքում, ըստ հոգեվերլուծաբանների, ոչ թե սուբլիմացիան է, այլ երևակայությունը և դրա միջոցով ստեղծած կերպարները, որոնց շնորհիվ կարծես իրագործվում են հեղինակի ճնշված և գուցե ինչ-որ չափով չգիտակցվող ցանկություններն ու դրդապատճառները:

Համաձայն հոգեվերլուծական պատկերացումների, ստեղծագործության հիմքում ընկած է սուբլիմացիայի մեխանիզմը: Սակայն պետք է նշել, որ սուբլիմացվում են ոչ միայն չբավարարված սեռական պահանջները: Բազմաթիվ հոգեբաններ լայնացնում են «սուբլիմացիայի» շրջանակը՝ այն դիտելով որպես մի պաշտպանական-հարմարվողական գործընթաց, որն իր հիմքում կարող է ունենալ ցանկացած բնագոյային կամ սոցիոգեն պահանջմունք, որի բավարարումը տվյալ իրադրության մեջ արգելափակված է:

Յուրաքանչյուր ստեղծագործական գործընթաց անպայման ունենում է երկու կողմ՝ 1) իրականության արտացոլման ժամանակ անձը կյանքից

³ Магомед-Эминов М. III., նշվ. աշխ., էջ 226:

⁴ Նույն տեղում, էջ 241:

տպավորություններ է ստանում, առանց որի հնարավոր չէ ստեղծագործել. 2) տպավորությունների ստեղծագործական վերամշակումը և այդ աշխատանքի արդյունքի արտապատկերումը (պրոյեկցիան) լեզվական մարմնավորմամբ: Այլ կերպ ասած՝ ստեղծագործական գործընթացը ոչ այլ ինչ է, եթե ոչ կրկնակի փոխակերպում, այսինքն՝ առաջին հերթին արտաքին գրգռիչի էներգիան փոխակերպվում է գիտակցության երևույթների կամ իրականության պատկերների, այնուհետև դրանք փոխակերպվում են լեզվական նկարագրությունների միջոցով, որոնք հանդես են գալիս որպես պատկերների, կերպարների առարկայացված, նյութականացված կրողներ:

Ստեղծագործությունը տարբեր կերպ կարելի է մեկնաբանել. որպես ինքնաստեղծում (հոգևոր, ֆիզիկական, իմացական հնարավորությունների իրականացում), ինքնասպառում (ուժերի կորուստ, անքնություն), բայց և փայլատակում երջանկությունից՝ որպես ինքնահաստատման և ինքնաբացահայտման միջոց՝ կոնկրետ գործերի մեջ: Այս բոլորը նպատակահարմար է միավորել «ինքնաիրականացնող փոխակերպում» հասկացության մեջ: Այն, ինչին դերասանը չի հասել կյանքում, փորձում է իր դերերում արտացոլել, այն ցանկություններն ու երազանքները, որոնք չեն իրականացել կյանքում, փորձում է իրագործել իր ստեղծագործության մեջ, այն ուժերը, որոնք չեն սպառվել կյանքում, զգացումներն ու ապրումները, որոնք կսկիծ և դառը պահեր են պատճառել նրան, ցանկանում է առարկայացնել իր արվեստի գործերում՝ կարծես հեռացնելով իրենից:

Ըստ հումանիստական ուղղության կողմնակից, հոգեբան Ա. Մասլոուի՝ ինքնաիրականացումը սեփական հնարավորությունների զարգացման գործընթաց է: Դա նշանակում է սեփական բանականության և ընդունակությունների օգտագործում և աշխատանք, որպեսզի լավագույնս կատարվի այն, ինչ մարդ ցանկանում է: Տաղանդը և խելքը դեռևս ինքնաիրականացում չեն: Այն գործընթաց է, որը չունի վերջ. դա կյանքի ձև է, աշխատանքի միջոց և որոշակի վերաբերմունք աշխարհի նկատմամբ: Այստեղ հարկ է անդրադառնալ մանկության փոխակերպմանը: Ընդհանրապես մարդիկ, մասնավորապես արվեստագետներն ունենում են մանկությունից հիշվող պահեր, դրվագներ, նախատիպեր և այլն: Օրինակ՝ դերասանների մի մասի մեջ դրանք արտահայտված են կերպարներում: Ոմանց համար էական նշանակություն է ունեցել իր ծննդավայրը, մյուսների համար՝ բակի բնակիչները և այլն:

Անձի անցյալը ձևավորվում, փոխակերպվում է անձի գործունեության ընթացքում: Անցյալը շարունակում է «ապրել», զարգանալ, այսինքն՝ չի մնում որպես անշարժ շերտ կամ իրադարձությունների հոգեբանական նստվածք, այն չի կորչում, այլ շարունակում է գոյություն ունենալ, այն դեռ ավարտուն չէ և հնարավոր է փոփոխության ենթարկել: Անձի գործունեության ընթացքում փորձը փոփոխվում է, և երբ ինչ-որ նոր բան է բացվում, անցյալը շրջվում է անսպասելիորեն, և այն, ինչ նախկինում էական էր ու կարևոր, կարող է կորցնել իր նշանակությունը: Անձի գործունեության ժամանակ փոխակերպվում է նաև անցյալի իմաստը: Այսպիսով՝ մարդու անցյալը չի անհետանում, այլ ձեռք է բերում «գոյատևելու» ունակություն՝ ենթարկվելով որոշակի փոփոխությունների:

Նշենք, որ անձի փոխակերպման գործընթացը ընդգրկում է ոչ միայն «ներքին», այլ նաև «արտաքին» աշխատանք. օրինակ՝ շրջապատի, աշխատանքի, բնակության վայրի փոփոխությունը, զբաղվածությունը և այլն:

Գեղարվեստական ստեղծագործությունը ճիշտ մեկնաբանելու և հասկանալու համար կարևոր է ն՝ արվեստագետի, ն՝ բուն արվեստի գործի, ն՝ հանդիսատեսի հոգեբանության և ապրումների ուսումնասիրությունը, քանի որ դրանք փոխկապակցված են, և դժվար է ասել, թե որին պետք է նախապատվություն տալ: Մարդը ն՝ գիտակցորեն, ն՝ ենթագիտակցորեն փոխակերպում է իր Ես-ը, անձնային փորձը՝ դրանով իսկ ձգտելով հասնել հոգեկան և ֆիզիկական ուժերի, իր «Ես»-ի ամբողջությանն ու միասնությանը: Ինչպես արտակարգ պայմանները, այնպես էլ ամենօրյա կյանքն ունեն բազմաթիվ կոնֆլիկտային և մարդու հոգեկանը խաթարող իրավիճակներ, որոնց պատճառով տեղի է ունենում անձի, նրան հուզող ապրումների փոխակերպում:

Դերասանն իր ներքին լարվածությունը, մենության զգացումը, օտարվածությունը կամ ուրախությունը փոխակերպում է իր իսկ գործերում՝ փորձելով հասնել ներքին ներդաշնակության: Դերասանի համար ներքին ներդաշնակությունն ձեռք բերելու ուղիներից է տանջող մտքերից իրեն ձերբազատելը և կերպարների ստեղծումը, որոնք դառնում են իր համար անբարենպաստ զգացմունքների կրողները. նա դրանով իսկ հասնում է որոշակի հանգստության և ներքին թեթևության, քանզի չարտահայտված ապրումների հետևանքները կարող են ողբերգական լինել արվեստագետի համար:

Ստեղծագործելու շարունակական գործընթացում դերասանը ն՝ անցյալից, ն՝ ներկայից վերցնում է որոշակի դեպքեր, իրավիճակներ և հույզեր, որոնք նորովի մեկնաբանում և կիրառում է իր ստեղծագործության մեջ: Ստեղծագործության մեջ արվեստագետը դրսևորում է իր հնարավորությունները, ուժեղացնում ինքնությունը: Ստեղծագործելու ընթացքում անձը ներթափանցում է իր անգիտակցականի խորքերը, հասնում Ես-ի ամբողջությանը: Միայն այդ դեպքում է, որ նա կարող է զգալ ինչպես հասարակության և մարդկության, այնպես էլ բնության հետ իր ունեցած հոգևոր սերտ կապերի հարստությունը: Ստեղծագործությունը լարված և կուտակված հոգեկան ուժերի և էներգիայի լիցքաթափման միջոց է: Հոգեբանական փոխակերպման շնորհիվ հասնելով Ես-ի ամբողջականության գաղափարին՝ անձը ներդաշնակություն է զգում ինչպես իր ներաշխարհում, այնպես էլ բնության հետ:

Դերասան Պ. Միմոնովը կարծում է, որ դերասանի աշխատանքում փոխակերպում է ծառայում առաջադրված իրադրությունների պատկերացումը: Ըստ Կ.

Ստանիսլավսկու, մարդը չի կարող փոխակերպվել ուրիշ մարդու՝ ամբողջովին հրաժարվելով իրենից, իր որակներից ու հատկություններից», և կերպարին մոտ լինելը հնարավոր է միայն անձի՝ մինչ այդ ունեցած որակների և հատկությունների փոփոխմամբ⁵: Ըստ հոգե-

⁵ Станиславский К. С., *Работа актера над собой*, М., 1954, с. 254.

բան Ջենինգսոնի՝ դրամաթերապիայի կարևոր գործառնություններից է նախկին փորձի վերափոխումը⁶:

Դրամաթերապիայում ևս, ինչպես հոգեվերլուծության մեջ, գործածում են «փոխանցում» հասկացությունը: Ենթադրվում է, որ դերասաններն ի վիճակի են փոխանցել և փոխանցում են իրենց անցյալի զգացմունքները և ներկայում շրջապատող մարդկանց նկատմամբ իրենց վերաբերմունքը (այդ թվում նաև՝ պիեսի անձանց): Ավելին, խաղալով մտացածին կերպարների դերեր՝ նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց և յուրահատուկ հնարավորություն են ստանում ապրել այն մտքերն ու զգացմունքները, որոնք չի կարելի արտահայտել ուրիշ միջոցներով: Դերասաններն ի վիճակի են որոշակի հեռավորություն պահպանել կերպարից, որի դեպքում իրադրությունը լինում է պակաս վնասակար, քան իրական կյանքում:

Դրամատիկ դերերում մարդը կարող է վերադառնալ իր կյանքի ապակառուցողական իրադրություններին, որտեղ նա իրեն անօգնական է զգացել և մտովի դրանք կերպավորելով է այնպես, որ հասնի իրադրությունների ավելի մեծ հսկողության և ազատության:

Այսպիսով, թատրոնը դերասանի համար «բուժիչ» դեր է կատարում: Նա ստեղծագործելու ընթացքում սպառում է իր մեջ եղած էներգիան՝ հասնելով ներդաշնակության ներքին և արտաքին աշխարհների միջև: Արվեստը մարդու ներաշխարհը հանգստացնելու և ներդաշնակություն ստեղծելու միջոց է:

ТРАНСФОРМАЦИЯ ЛИЧНОСТИ АКТЕРА В ПРОЦЕССЕ ТВОРЧЕСТВА

АРШАКЯН С. М.

Резюме

Театр является средством достижения гармонии с внешним и внутренним миром как для актера, так и для зрителя. В процессе игры актер трансформирует представляемые события, стремясь достигнуть внутренней гармонии. Психологическая трансформация дает возможность личности уверовать в совершенство собственного Я. Однако человек не может полностью трансформироваться в другого человека.

Театр способствует психологическому «оздоровлению» актера, ибо искусство является своеобразным средством внутреннего умиротворения личности.

⁶ Այս մասին տե՛ս **Вильсон Г.**, *Психология артистической деятельности*, М., 2001, с. 355.